ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 201

« 18 » ՀՈՒԼԻՍԻ 2025Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի

3-րդ մասով, «Պաշտպանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի 9-րդ, 11-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետերի և «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2025 թվականի օգոստոսի 1-ին ՀՀ ՊՆ 5-րդ բանակային կորպուսի 70179 զորամասի հրաձգարանում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատողների հետ անցկացնել կրակային պատրաստության մարզումներ:

2. Մարզումներին նախապատրաստվելու և կազմակերպված անցկացնելու նպատակով նշանակել ղեկավար կազմ՝

1) մարզումների ղեկավար՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ՝ Ա. Խաչատրյան,

2) մարզումների ղեկավարի տեղակալ՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ՝ Ս. Միրզոյան:

3. Կրակային պատրաստության մարզումներին ընդգրկել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի պետական վարչական, հայեցողական, քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող, քաղաքացիական աշխատանքներ կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողներին:

4. Մարզումների ղեկավար ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ՝ Ա. Խաչատրյանին.

1) նախապես ապահովել կրակային պատրաստության մարզումներին ներգրավված աշխատողների պատշաճ հրահանգավորումը՝ զենքի հետ վարվելու անվտանգության կանոնների վերաբերյալ,

2) հրաձգարանի տարածքում խստիվ հետևել անվտանգության կանոնների պահպանմանը և ապահովել հրաձգության կազմակերպված ու անվտանգ անցկացումը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը ստանձնում եմ անձամբ:

6. Որոշումը ծանուցել կրակային պատրաստության մարզումներին ներգրավված ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատողներին:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք.Եղեգնաձոր